Ռեգիոնս TV-ի առաքելությունը, սկզբունքները և խմբագրական արժեքները

Մեր լրատվամիջոցի բովանդակային կարգախոսն է. ««Տեղեկատվական աղբի» բացառում, օբյեկտիվ տեղեկատվության մատուցում, անդրադարձ այն թեմաներին, որոնք մտահոգում և հետաքրքրում են մարդկանց»:

Մեր առաքելությունը

Ռեգիոնս TV-ն կոչված է ապահովելու միջազգային, տարածաշրջանային և ներհայաստանյան հավաստի և օբյեկտիվ տեղեկատվություն, վերլուծական նյութեր, նաև լրահոս և տեսանյութերի շարք Հայաստանի բոլոր մարզերից՝ հատկապես այն համայնքներից, որտեղ «ինֆորմացիոն վակուում» կա, որտեղ մեդիա ոլորտի ներկայացուցիչների ներկայությունը բացակայում է կամ սահմանափակ է:

Մեր առաքելությունն է՝ պաշտպանել խոսքի և լրատվամիջոցների ազատությունը, տարածել միայն օբյեկտիվ, ճշգրիտ տեղեկատվություն, պայքարել ապատեղեկատվության դեմ, բարձրացնել տեղական խնդիրների հանդեպ հանրային և պետական ուշադրության մակարդակը, խթանել մասնակցային ժողովրդավարությունը, պատրաստել բազմաբովանդակ տեսանյութեր, վավերագրական ֆիլմեր, նաև բանավեճերի անցկացման, վերլուծական և քննադատական մեկնաբանությունների հնարավորություն տալ բոլորին:

Անհրաժեշտ ենք համարում հարգել ժողովրդավարությունը, մարդու իրավունքները և բազմակարծությունը:

Մեր խմբագրական սկզբունքները

1. Ճշգրտություն և փաստերի ստուգում – Մենք տարածում ենք միայն այն տեղեկատվությունը, որը հիմնված է փաստերի և վստահելի աղբյուրներից ստացված հավաստի տեղեկությունների վրա: Խմբագիրներն ու լրագրողները պարտավոր են ստուգել յուրաքանչյուր հոդվածի կամ տեսանյութի միջոցով տրված տեղեկությունը, նաև վիճակագրական տվյալները՝ տարբեր աղբյուրներից փաստերի խաչաձև ստուգման միջոցով:
2. Անկախություն – Մեր խմբագրական գործունեությունն ու լրագրողական աշխատանքն ազատ և անկախ է, զերծ է քաղաքական, կուսակցական ազդեցությունից կամ այլ արտաքին ճնշումներից: Անկախ գործելաոճը, սկզբունքայնությունն ու խոսքի ազատության պաշտպանությունը մշտապես մեր գործունեության առանցքում է:
3. Օբյեկտիվություն և անաչառություն – Ռեգիոնս TV-ի լրագրողներն ազատ են իրենց գործունեության մեջ, նրանք են ընտրում և լուսաբանում իրենց առաջարկած թեմաները՝ առանց կողմնակի միջամտության: Մենք կարևորում ենք ցանկացած դատողություն, և օբյեկտիվությունն ապահովելու համար մշտապես ապահովում ենք կարծիքների բազմազանությունն ու կողմերի տեսակետները:
4. Հանրային շահի գերակայություն – Ռեգիոնս TV-ն ծառայում է որպես անկախ և այլընտրանքային տեղեկատվական հարթակ: Մենք առաջին հերթին լուսաբանում ենք այն թեմաները, որոնք առնչվում են հասարակությանը հուզող խնդիրներին, մտահոգություններին և իրավունքներին: Առաջնահերթություն ենք տալիս նաև տվյալ ժամանակահատվածի կարևորագույն իրադարձությունների լուսաբանումներին, կարևորում ենք խնդիրների բարձրաձայնումը, հանրայնացումը ու դրանց լուծմանը հասնելու հետևողականությունը:
5. Հարգանք և արժանապատվություն – Մենք հարգում ենք մեր լսարանի, օգտատերերի և աղբյուրների իրավունքներն ու արժանապատվությունը, բացառում ենք կողմնակալ տեղեկատվությունը, խտրական վերաբերմունքը, վիրավորական պիտակավորումները: Կարևորում ենք օբյեկտիվ և արժանահավատ տեղեկության տրամադրումը, կեղծ լուրերի և ապատեղեկատվության դեմ պայքարը:
6. Ներքին կանոններ - մենք ունենք ներքին խմբագրական կանոններ և հստակ գործիքակազմ, որոնք նախատեսված են մեր բովանդակության ճշգրտությունն ու արժանահավատությունն ապահովելու համար: Մինչ հրապարակումը բոլոր նյութերն անցնում են փաստերի ստուգման, աղբյուրների համադրման փուլեր, կատարվում է խմբագրական դիտարկում: Մեր խմբագիրներն ու լրագրողները առաջնորդվում են մասնագիտական էթիկայի կանոններով և խստորեն հետևում են խմբագրական ուղեցույցներին:

Մեր խմբագրական արժեքները

- Անշեղություն. մենք հավատարիմ ենք մեր առաքելությանը՝ անկախ հանգամանքներից:
- Թափանցիկություն. մենք մշտապես ապահովում ենք մեր գործունեության, աշխատանքային մեթոդների, ֆինանսավորման և որոշումների թափանցիկությունն ու հրապարակայնությունը:

- Արդարություն, ազնվություն. մենք ձգտում ենք ապահովել ազնիվ մոտեցում և արդար լրատվություն, որը ձայն է տալիս քննադատության ենթարկվող մարդկանց կամ խմբերին:
- Պատասխանատվություն. մենք պատասխանատու ենք մեր հրապարակումների օբյեկտիվության ու ճշգրտության համար և հետևողական ենք հասարակությանը հուզող խնդիրների լուծմանը հասնելու հարցում:
- Հաշվետվողականություն. մենք ձգտում ենք դրսևորել բարձր մասնագիտական վարքագիծ՝ միաժամանակ հանրությանը հաշվետու լինելով:
- Համագործակցություն և համայնքային ներգրավվածություն. մենք համագործակցում ենք տարբեր գործընկերների՝ տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ: Տարբեր մարզերում համագործակցում ենք տեղի մեդիա կառույցների և ՀԿ-ների հետ, մշտապես կարևորել ենք մեր նախագծերում ակտիվիստների, փորձագետների և համայնքների պաշտոնյաների ու բնակիչների ներգրավվածությունը:

Ռեգիոնս TV-ն պատասխանատու է հանրային ծառայության այնպիսի առաքելության համար, որը միտված է՝

-Հանրության իրազեկմանն ու նախաձեռնողականության մակարդակի բարձրացմանը՝ մատուցելով ճշգրիտ, հավաստի և հավասարակշռված տեղեկատվություն՝ հատկապես հասանելիության պակաս ունեցող համայնքներում:

-Քաղաքացիական մասնակցության խթանմանը՝ բարձրաձայնելով տեղական խնդիրները, նպաստելով համայնքային քննարկումներին ու հանրային վերահսկողությանը:

-Իրավունքների պաշտպանությանը և ժողովրդավարության ամրապնդմանը՝ ազատ խոսքի տարածմամբ, թափանցիկության ապահովմամբ, խնդիրների հանրայնացման և իշխանություններին հաշվետու դարձնելու միջոցով:

-Տարածաշրջանային համաչափ զարգացման խթանմանը՝ լուսաբանելով Հայաստանի բոլոր մարզերի խնդիրներն ու հնարավորությունները:

Կապը հանրության հետ

Ռեգիոնս TV-ն ունի բովանդակության հարցերով հանրության հետ կապերի պատասխանատու, որը ամեն օր հետևում է մեր տարբեր հարթակների մեկնաբանություններին, հեռախոսազանգերին ու նամակներին: Խմբագրակազմը պահպանում է կապը հանրության հետ՝ պատասխանելով հարցերին: Առկա է էլ.փոստի հասցե, որը նախատեսված է հարցումներ, մեկնաբանություններ, բողոքներ և առաջարկություններ ստանալու համար: Բոլոր հարցումներին պատասխանում ենք հնարավորինս շուտ՝ առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում:
Ռեգիոնս TV-ն ակտիվ է տարբեր սոցիալական ցանցերում (Facebook, Instagram, YouTube, Telegram), որոնց էջերին հետևում է հանրության հետ կապերի պատասխանատուն: Խմբագրակազմը պատասխանում է օգտատերերի հարցումներին ու մեկնաբանություններին, ընդունում է հանրության՝ լուսաբանման ենթակա թեմաների և խնդիրների առաջարկներ:

Անձնական տվյալների հավաքագրում

Regionstv.am կայքը կարող է հավաքագրել որոշ անձնական տվյալներ միայն օրենքով սահմանված կարգով և բացառապես ծառայությունների որակի բարելավման, օգտագործման, վերլուծության և օգտատերերի հետ հաղորդակցության նպատակով:

Հավաքագրվող տվյալները կարող են ներառել՝ • Անուն և ազգանուն • Էլ. փոստի հասցե • Հեռախոսահամար • Բնակության վայր:

Տվյալների օգտագործման նպատակներն են՝ • Կայքի աշխատանքի և բովանդակության բարելավում • Օգտատերերի արձագանքների ստացում և հետադարձ կապ • Նոր նախագծերի, նախաձեռնությունների կամ հրապարակումների մասին տեղեկատվության տրամադրում:

Տվյալների պաշտպանություն

Մենք կիրառում ենք բոլոր անհրաժեշտ տեխնիկական և կազմակերպչական միջոցները՝ տվյալների անվտանգությունն ապահովելու և երրորդ կողմերին չհանձնելու համար՝ առանց օրինական հիմքի կամ օգտագործողի հստակ համաձայնության:

Օգտատերերի իրավունքներ

Օգտատերերը կարող են ցանկացած ժամանակ դիմել մեզ՝ իրենց տվյալների հասանելիության, շտկման կամ հեռացման հարցերով՝ info@regionstv.am էլ. հասցեով:

Խմբագրական ուղեցույցի վարքականոն

-Ռեգիոնս TV-ի կառուցվածքը ձևավորված է այնպես, որ խմբագրական գործունեությունը պաշտպանված լինի ցանկացած ներքին կամ արտաքին ոչ պատշաճ ազդեցությունից: Մեր աշխատանքը ղեկավարվում է խմբագրական անկախության և սկզբունքայնության արժեքներով: Խմբագրական որոշումները կայացվում են բացառապես մասնագիտական չափանիշներով՝ զերծ քաղաքական, ֆինանսական կամ անձնական շահերից:

-Ռեգիոնս TV-ն իր բոլոր լրագրողների անվտանգությունը դիտարկում է որպես առաջնահերթություն:

-Մշակված է անվտանգության քաղաքականություն, որը ներառում է հատուկ պաշտպանություն վտանգավոր միջավայրում աշխատող լրագրողների համար:

- Լրագրողները տեղեկացված են, որ իրենց գործունեության մեջ պետք է բացառեն քրեորեն պատժելի արարքները (կաշառք, հովանավորչություն և այլն):

-Խմբագրակազմը, լրագրողները պարտավոր են հարգել մարդկանց անձնական կյանքի գաղտնիությունը և ապահովել անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը:

-Այն աղբյուրները, որոնք իրենց ռիսկի ենթարկելով տրամադրում են տեղեկատվություն, պետք է ստանան գաղտնիությունը և անանունությունը պահպանելու խոստում:

-Լրագրողները պետք է հարգեն հեղինակային իրավունքը, չպետք է օգտագործեն այլ աղբյուրներից ստացված բովանդակություն (նկար, տեքստ կամ այլ նյութ)՝ առանց համապատասխան թույլտվություն ստանալու:

-Հատուկ մոտեցում է պահանջվում երեխաների հետ աշխատելիս: Երեխաներին չպետք է հարցեր տալ այնպիսի թեմաներից, որոնք դուրս են նրանց գիտելիքի և պատասխանելու կարողության շրջանակից:

- Վիշտ կրող կամ հոգեկան ծանր ապրումների մեջ գտնվող մարդկանց նկատմամբ պետք է ցուցաբերել հատուկ զգայունություն:

- Մենք չենք հրապարակում անձի ռասայական կամ կրոնական պատկանելությունը, եթե դա չի առնչվում լուրի բովանդակությանը:

-Մեր խմբագրակազմը գործում է հստակ մշակված կանոնակարգով՝ ներառյալ նյութերի պատրաստման, ստուգման և հրապարակման բոլոր փուլերը: Յուրաքանչյուր թեմա և բովանդակություն անցնում է նախնական քննարկման փուլ, փաստերի ստուգում և բովանդակության վավերացման գործընթաց՝ մինչև հրապարակվելը, նաև խմբագրական վերահսկողության ամբողջ գործընթացի ժամանակ:

-Մեր խմբագիրները և լրագրողները պարտավոր են պահպանել մասնագիտական էթիկայի կանոնները, և մենք պարբերաբար կազմակերպում ենք ներքին քննարկումներ ու վերապատրաստումներ՝ այս կանոնների պահպանումը շարունակաբար երաշխավորելու համար:

-Արտաքին աղբյուրներից ստացված նյութերը ստուգվում են նույն չափանիշներով, ինչ մեր լրագրողների կողմից ստեղծված բովանդակությունը: Կատարվում է օգտատերերի ստեղծած բովանդակության կամ ականատեսի նորությունների նախնական ստուգում և հաստատում՝ հստակ ստուգելի աղբյուրների միջոցով, նաև անթույլատրելի տեղեկատվության՝ ատելության խոսքի, զրպարտության կամ անհիմն մեղադրանքների զտում և հստակ սահմանափակումներ՝ խուսափելու համար ապատեղեկատվության տարածումից:

-Ապահովվում է օգտատերերի իրավունքների պաշտպանությունը:

Կազմակերպության համար աշխատող ֆրիլանսերները լրատվամիջոցի հանձնարարությունները կատարելիս ևս պահպանում են այս սկզբունքները:

Պաշտպանելով հանրային շահը՝ Ռեգիոնս TV-ն հանձնառու է.

- Ապահովել խմբագրական անկախությունը և երաշխավորել, որ զովազդային բովանդակությամբ (կոմերցիոն կամ հովանավորվող) նյութերը հստակ մակնշվեն և տարանջատվեն լրագրության հիմնարար սկզբունքներին համապատասխան ստեղծված խմբագրական նյութերից:

-Հստակ տարանջատել նորությունների բովանդակությունը (լրագրողական նյութերը) կարծիքներից և արտաքին, ոչ լրագրողական կառույցների կողմից տրամադրված բովանդակությունից:

- Արգելել ցանկացած բովանդակություն, որը պարունակում է զրպարտություն, ատելության խոսք, անձնական կյանքի գաղտնիության խախտում կամ չարաշահում:

-Բովանդակության ցանկացած անճշտություն շտկել ժամանակին և թափանցիկ կերպով:

-Բողոքներին պատասխանել և արդարացի լուծում տալ ողջամիտ ժամանակահատվածում:

Շահերի բախում

Մենք ապահովում ենք, որ լրագրողների անձնական շահերը չհակասեն մեր գործունեությանը կամ կասկածի տակ չդնեն մեր բարեխղճությունը:

-Մեր անձնակազմը չպետք է առաջնորդվի անձնական, առևտրային կամ քաղաքական շահերով:

-Անձնակազմի որևէ անդամ չպետք է օգտագործի իր դիրքը՝ անձնական օգուտ կամ առավելություն ստանալու համար: Մենք չենք ընդունում որևէ վճար, նվեր կամ առավելություն, որը կարող է խաթարել մեր սկզբունքայնությունը կամ անկախությունը:

-Մեր լրագրողական նյութերի մեջ չպետք է լինի առևտրային ապրանքի կամ ծառայության գովազդ:

-Լրագրողները պետք է բացահայտեն ցանկացած շահ՝ անձնական, կորպորատիվ և այլն, երբ աշխատում են անմիջականորեն իրենց առնչվող թեմայի վրա:

-Աշխատակազմի անդամները չպետք է գրեն, լուսաբանեն, լուսանկարեն կամ խմբագրեն նյութեր որևէ անձի կամ հարաբերության մասին, որոնք կապված են իրենց կամ իրենց մերձավորների, մտերիմների հետ:

-Լրագրողը չպետք է նյութ գրի իր ազգականի կամ զուգընկերոջ մասին կամ նյութում մեջբերի նրա խոսքը, նույնիսկ եթե վերջիններս տվյալ ոլորտի մասնագետ են: Եթե որևէ պատճառով բացառություն է արվում, նյութում պետք է բացահայտվի այդ կապը:

Արտաքին ներգրավվածություն

Ռեգիոնս TV-ն ընդունում ու հարգում է լրագրողի և մյուս աշխատակիցների անձնական կյանքի իրավունքը: Այնուամենայնիվ, աշխատակիցները պետք է տեղեկացնեն տնօրենին կամ գլխավոր խմբագրին, եթե մտադիր են.

- Մասնակցել հանրային ակցիաների, քննարկումների կամ սեմինարների

- Աշխատել այլ ԶԼՄ-ում

- Ցուցմունք տալ դատարանում

- Զբաղվել այլ աշխատանքով, որը կարող է հակասել մասնագիտական պարտականություններին: